ՆՈՐ-ԴԱՐ

№ 30 ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ Շաբաթ, 17 Փետրուարի 1901 Շաբաթ, 17 Փետրուարի ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 30

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր.50 կ., ամիսը՝ 1 ր., հատով 5 կ.։
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ Даръ“
կամ Tiflis, Rédaction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի մեծ օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների գինն 3 կ., րեկլամների համար կրկնապատիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող. — Քաղաքական աչխարհից։
Քրոնիկոն.— Լուրեր։
Մեզ գրում են.—Ջամախուց։ Դերբենտից։ Օդեսսայից։
Անկարգութիւններ Հելսինգֆորսում։
Թատրոն։
Բաց նամակ Տմբլաչի Խաչանին։
Թղթակցութիւններ.—Նամակ Պարսկաստանից, Թաւրիզ։
Քաղաքական.—Մակեդոնիա։ Անգլիա։ Չերնիգորիա։ Չինաստան։
Հեռագրներ։
Բանասիրական.—«Պարոն N-ին աղքատներին բաժանելու համար 200 րուբլի»։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 16 փետրուարի 1901 թ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՉԽԱՐՀԻՑ

—

Անգլիական աղբիւրից վերջին լուրերը Հարաւային Աֆրիկայից բոէրների համար անաչող են. և զարմանալու էլ բան չէ, քանի որ մէկի դէմ տասը-քսան հոգի են կռւում։ Բայց հաստատ և վճռական դեռ բան չկայ։ Անգլիացիները վաղուց Դևետի և Բոթայի ետևից որսի են դուրս եկել, և անգլիական զօրապետները ամեն կողմից նրանց յետամուտ են բռնելու, և իբր թէ Բոթան արդէն անձնատուր է լինում, իսկ Դեւետն յուսահատ և անել վիճակի մէջ է... Սակայն այդպիսի լուրերը շատ է հաղորդել անգլիական կառավարութեան տրամադրութեան տակ դրուած հեռագրական գործակալութիւնը. իրողութիւնն այն է, որ ահա 16 ամիս է՝ բոէրները շարունակում են սուրը գործի համար կռիւը և իրենց կողմն են դրաւել անգլիական հասարակութեան մի մասը, որ պահանջում է Տրանսվաալի և Օրանժի հասարակապետութիւնների անկախութիւնը՝ հիմք առնելով հաշտութեան և խաղաղութեան վերականգնումն։

Վիկտորիա Թագուհու մահուանից անմիջապէս յետոյ մամուլը խօսեց անգլո գերմանական դաշնակցութեան մասին, ընդունելով որ այդ դաշնակցութիւնն իրականանալու վրայ է և թէ այդպիսով Անգլիան կատարեալ carte blanche է ստանում Հարաւային Աֆրիկայի վերաբերութեամբ։

Այդ դաշնակցութիւնը մենք իրագործելի չհամարեցինք, և այժմս արդէն Չինաստանի վերաբերութեամբ Անգլիայի և Գերմանիայի միջև տարաձայնութիւն է ծագել։ Ու այդպէս էլ պէտք է լինի և ուրիշ շատ խնդիրներում ու տեղերում։ Գերմանական կառավարութիւնն իսկապէս բոէրների դատի դէմ չլինելով՝ նրանց գործը չհաւորձում է իր օգտին Անգլիայի դէմ և չէ ուզում տեսնել ապագան. այլապէս՝ նա պէտք է վազուց միջամտէր բոէրների դատին. դրանով նա թէ վերջ դրած կլինէր արիւնհեղութեան ու արդար գործ կատարած, և թէ Գերմանիայի շահերն աւելի լաւ ապահոված կլինէր Աֆրիկայում։

Այդ պարզ ճշմարտութիւնը չէ ուզում տեսնել գերմանական կառավարութիւնը։

Կանցլեր Բիւլովն այդտեղ գործում է իբրև դիպլոմատ, որ ներկայից է ուզում միայն շահուել, և ոչ իբրև պետական մարդ, որ պէտք է աւելի հեռու ապագան ի նկատի առնէ և տեսնէ։

Այսօր բոէրների կռւում գերմանական կառավարութիւնը դէպի Անգլիան այն դիրքն է բռնել, ինչ որ Անգլիան բռնել էր սպանո ամերիկեան պատերազմում դէպի Միացեալ Նահանգները։

Անգլիան այժմս զգում է անշուշտ իւր այն սխալը, որով նա թոյլ տուեց Միացեալ-Նահանգներին Կուբայից և Փիլիպպեան կղզիներից զօրքս քշելու և ջարդելու սպանացիներին. Անգլիան տեսնում է, որ Միացեալ-Նահանգները իրեն ոչ թէ չնորհակալութիւն են յայտնում, այլև հետզհետէ շատ բանում իւր ճանապարհը պիտի կտրեն։

Միևնոյնը պիտի զգայ և տեսնէ գերմանական կառավարութիւնը, երբ մի օր ոչնչացած կլինեն Հարաւային-Աֆրիկայի երկու հասարակապետութիւնները և ամբողջ Հարաւային Աֆրիկան Անգլիայի ձեռքում կլինի։

Բարեբաղդաբար գերմանական ժողովուրդն ամենևին համամիտ չէ գերմանական կառավարութեանը՝ Անգլիայի և Հարաւային-Աֆրիկայի վերաբերութեամբ։

Գերմանացիները ծանր են շարժում, բայց երբ շարժում են տեղից, շարժումը զօրեղ է լինում և տևողական. կարելի է համարձակ ասել, որ ամբողջ Գերմանիան մեծ և փոքր, շատ չնչին բացառութեամբ, դէմ են գերմանական կառավարութեան և իրենց կայսրի դէպի Անգլիան բռնած ընթացքին, և ոչ միայն դէմ են, այլև յարձակւում ու հայհոյում են, ամեն օր միտինգներ են կազմում Անգլիայի դէմ յօդուտ բոէրների։

Շուտով ստիպուած կլինի Բիւլովը իւր քաղաքականութիւնը փոխելու։ Արդէն բոլոր միւս երկրներում, դրանց մէջ և Անգլիայում, խիստ կրիտիկայի է ենթարկւում դրաֆ Վալդերզեէի Չինաստանում նոր արշաւանքներ անելու որոշումը և նախագիծը։

Այդ ընդհանուր տրտունջը ցոյց է տալիս, որ ամենքը երկիւղ են կրում, թէ մի գուցէ Գերմանիան կամենայ Չինաստանում հաստատ ոտք դնել, ինչպէս որ այդ արդէն արել է Թիւրքիայում աջողութեամբ։

Ժամանակներն ու հանգամանքներն աւելի զօրաւոր են, քան մարդկանց կամքը և նախագծերը։ Ո՛վ գիտէ, թէ ապագան ինչ է բերելու։ Որ գերմանացին մի անգամ ոտքը դնելով Չինաստում այնպէս դիւրութեամբ չի ձգիլ այդ երկիրը և չի հեռանալ, —այդ հաստատ է։

Գերմանիայում որոշուած և նախագծուած էր, որ Փրանսիայի դէմ սպասուած պատերազմին գերմանական զօրքերի հրամանատարը լինելու էր գրաֆ Վալդերզեէն։

Այդ մարդկանց խորհուրդ էր։

Վալդերզեէն արդէն ծերացաւ և, բարեբաղդաբար, Փրանսիայի ու Գերմանիայի միջև սպասուած պատերազմը տեղի չունեցաւ։ Վալդերզեէն այժմ Չինաստանում բոլոր եւրոպական, ամերիկեան ու ճափոնական զօրքերի ընդհանուր հրամանատար՝ գեներալիսիմուսն է, և երևի կրվերադառնայ Բերլին «ֆելդմարշալ Վալդերզեէ Չինաստանցի» անունով։

Այդ էլ Աստուծոյ կամքն է։

Մի հարիւր տարի էլ, և այնուհետև քաղաքական աչխարհը կըզբաղցած—և գլուխ տուեց լիազօրին։ Սակեանը հրամայեց նրան հաշուեմատեանի մէջ ծախք գրել՝ «պարոն N-ին աղքատներին բաժանելու համար 200 րուբլի»։

—Շատ լաւ, այս րոպէին,—ասաց հաշուապահն ու դուրս գնաց։

Հաշուապահը գլուխը տատանելով ներս մտաւ գրասենեակի դռնով չչնջալով՝

—Խեղճ աղքատ... քո անունով...

Մի քանի րոպէից յետոյ լսուեցաւ կառքի անիւների դղրդիւն։ Կառքը կանգ առաւ Սակեանի դռան առաջ։ Սակեանը դուրս գնաց այցելութիւններ տալու։ Փողոցում նրա դէմն ելաւ մի կին ցրցոտիների մէջ, մեկնեց ձեռքը դէպի Սակեանը և ողորմութիւն աղերսեց.

—Ահա որդիս,—հեկեկում էր խեղճ կինը,—կոկորդն ուռել է. հաղիւ է շընչում։ Աստուած ձեր կեանքն օրհնի. օգնեցէք, բժիշկը ձրի չի նայում։ Ամուսինս էլ տանն է պառկած խելագարի պէս զառանցելիս։

Երեխան փաթաթել էր նա և մէջքին կապել. մանուկն անդադար խրխռեցնում էր, երբեմն նուաղ ձայնով լաց լինելով։ Սակեանը հինգ կոպէկ հանեց իր գրպանից ու կնոջը տուեց, ապա աջ ու ձախ նայեց - դռնապանին էր որոնում.

—Ես քեզ հարիւր անգամ ասել եմ, որ ոչ ոքի ներս չթողնես, դարձեալ կամ քեզ ասած կամ պատին։

Ծառան իսկոյն մօտեցաւ կնոջը, իսկ Սակեանը նստելով կառքը հրամայեց կառապանին արագ քշել անցնել։ Աղքատ կնոջ ձեռքը պարզուած էր մնացել։ Նա լուռ նայում էր փայլուն կառքի ետևից, որի անիւները, փոշոցի ցեխն այս ու

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«ՊԱՐՈՆ N-ԻՆ ԱՂՔԱՏՆԵՐԻՆ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 200 ՐՈՒԲԼԻ»

—

I.

Նոր տարու առաւօտն էր. ցուրտ, թուք չորացնող մի առաւօտ։

Ցայտնի վաճառական Վատահեանի լիազօր Սակեանը լուացուել, հագել էր իւր մեծ տաք ու գեղեցիկ բնակարանում և պատրաստւում էր այցելութեան գնալու մի քանի պաշտօնական տեղեր, ապա բարեկամների ու ծանօթների տները։ Այսօր նա առանձին հոգածութեամբ էր զարդարւում. չէ որ նոր տարի է. մի բանով պէտք է որոշուել, զանազանուել հնից։ Ու այժմ հարկաւոր էր, որ նա ուրիշների առաջ փայլէր, և հէնց նոր տարու առաւօտին դրբանով ուզեց զանազանուել հնից։

Ահա կամ ու պատրաստ, անուշահոտ իւղերով օծուած, նա մտաւ իւր առանձնասենեակը և դիմեց դէպի գրասեղանը։ Դրասեղանի վրայ դես ու դեսը ընկած էր նիչչէի «Այսպէս էր խօսում Զրադաշտը» գրքի ռուսերէն թարգմանութիւնը։ Ախ, այդ գրքի մէջ որքան իրաւացի մտքեր կան, և այս աչխարհի մէջ քանի՜ան անիրաւացի կերպով քարշ են տալիս իրենց գոյութիւնը, ծծելով ուրիշների աչխատանքը և, որ գլխաւորն է, նրանց գործունէութեան դէմ խոչընդոտ հանդիսանում,— մտածում էր Սակեանը գիրքը թերթելով ու տեղ տեղ կանգ առնելով։ Գիրքը փակեց ու մի կողմ դրեց. մի թերթ աչք ձգեց Զոմբարտի «Սոցիալական քաղաքականութեան իդէալները» գրքի ռուսերէն թարգմանութեան վրայ. այնուհետև նրա հայեացքն ընկաւ պատից կախուած մի գեղեցիկ պատկերի, որ նուիրել էին նրան Վատահեանի ֆիրմայի ծառայողները մի խեղճ կին փոքրիկ զաւակների ցրտից կարմրատած ձեռքերից բռնած հեռանում է հայրենի խրճիթից, որ այժմ խստասիրտ պարտապանի ձեռքն է անցել. մտքում է անձրևը վերևից նրա գրկի երեխայի երեսին. երեխան լաց է լինում միւս երեխաներն անգիտակից առաջ են քայլում դողդողալով, իսկ խեղճ կինը չի ուզում երես դարձնել հայրենի խրճիթից։ Սակեանին չընջապատող առարկաներն իրար հակադիր էին. խիստը և մեղմը, քնքոյշն ու բիրտը հաւասար տեղ ունէին այնտեղ։ Եւ զարմանալի կերպով նա հաշտեցնում էր հակադրութիւնները։ Նրա համար այժմ տարբերութիւնների սահմանը չատ նեղ էր։ Բայց առաջ այդպէս չէր երիտասարդ Սակեանը, երբ ուսանող էր։ Կեանքի բազմատեսակ հանգամանքների տակ էր նա փոխուել։ «Անցան այն ժամանակները,—ասում էր նա,—այժմ ուրիշի ձեռքին ենք նայում. առանց վաճառականի փողին մենք ոչինչ ենք»։ Այժմ նա թողել էր ուսանողութեան ժամանակի երազածները և մտածում էր «պարտաճանաչ լինել, լաւ անուն հանել ու դիրք ստեղծել, որ վաղուան օրը քաղցած չմնայ. հարստանալ, փող դիզել, կեանքի հոսանքին կուլ չգնալու համար։ Կեանքի իրաւունքն ուժեղինն է»։

Սակեանի հայեացքը չընջապատող առարկաներից ընկաւ գրասեղանի վրայ, որի պարագայքը փայլում էին։ Նայեց ժամացոյցին, յանկարծ կանգ առաւ, ցուցամատն ճակատին դրեց ու սկսեց մտածել։ Անգոհունակութեան մի թերթև ստուերը անցաւ նրա խաղաղ երեսով. նա ցուցամատը իջեցրեց ճակատից, զարկեց սեղանին ու նստեց նրա առաջ, թաւշեայ փափուկ բազկաթոռի վրայ։ Վարտիկի գրպանից հանեց բանալիների մի խումբ փայլուն չղթայի մէջ ամրացրած, բաց արաւ սեղանի արկղը և թուղթ հանեց։ Այս բոլոր գործողութիւնների ժամանակ նա յաճախ նայում էր յանդիման պատից կախուած հայելու մէջ ու դիտում իւր դիրքը։

—Գէտքական մարդիկ են, պէտք է մի բանով չահել. ամեն դէպքում էլ պէտք են, միշտ մեր գործն առաջ են ձգում։ Այսպէս աննե՛նք, մէկին 200, միւսին 100 . . . .

Սակեանը ծանր-ծանր թաց արաւ գրիչը, թուղթն առաջը քաշեց ու սկսեց գրել, երբեմն երբեմն կանգ առնելով ու մտածելով.

«Նորին...N ին։ Ներեցէք, որ չհարողացայ անձամբ այցելել ձեզ։ Ծանր առթիւ ընդունեցէք սրտանց ու անկեղծ չնորհաւորութիւններս, յարգանացս խորին հաւաստիքի հետ։ Մեր ամբողջ ֆիրման չնորհակալ է ձեզանից, որովհետև դուք միշտ պաշտպանել էք նրա շահերը։ Իբրև նշան մեր դէպի ձեզ տածած յարգանքի, ուղարկում եմ 200 րուբլի։ Հաճեցէք բաժանել աղքատներին։ Յոյս ունիմ, որ այսուհետև էլ կըշարունակէք մօտ լինել մեզ և մեր ֆիրմային»։

Մէկ անգամ էլ կարդաց գրածը, հայելու մէջ դիտեց իրեն, ուղղուեց՝ կուրծքն առաջ ձգելով, ապա կրկին աչք ածեց գրածին,—արդեօք անզգոյշ՝ վիրաւորական բան չկա՞յ,—թերթև ժպտաց ու փակեց ծրարի մէջ նամակը, այբեւտմամբ և երկու գոյնզգոյն թղթադրամ։ Սակեանը վեր կացաւ ու, մօտենալով պատին, ձեռքով հպեց ելեքտրական զանգակի կոճակը։ Ծառան ներս մտաւ։

—Դու ճանաչում ես N-ի տունը,—անցեալ նոր տարուն ու զատկին էլ ուղարկել եմ քեզ,—վազվզոտ գնա և այս ծրարը քո ձեռքով յանձնիր նրան։ Հուշացնես և չկորցնես, շատ կարևոր բան է։

—Շատ լաւ, այս րոպէին,—ասաց ծառան ըստ սովորութեան ու դուրս գնաց։

Սակեան ձեռքերը վարտիքի գրպաններում դրած սկսեց յետ ու առաջ քայլել մտմտալ գեղեցիկ յղկուած ու փայլուն յատակի վրայով։ Նրա պատկերն անդրադառնում էր այդ պապղուն յատակի մէջ ու նա հրճւում էր ժպտալով ինքնագոհ կերպով։ Կամաց կամաց նա երևակայութեամբ ուրիշ տեղ գնաց, հաւանականօրէն իւր սրտին շատ մօտ տեղ ու սկսեց սուլել ինչ որ ռոմանսից մի կտոր, որ անցեալ երեկոյ օպերայումն էր լսել։ Սակեանը կանգ առաւ, զգաց որ իւր առանձնասենեակումն է, նստեց ու դրեց երկու ուրիշ նամակ։ Նոյն կարգով փակեց ծրարները և կրկին զանգահարեց այս անգամ ուրիշ կոճակ սեղմելով մատի տակ։ Ներս մտաւ հաշուապահը—մի բարձրահասակ ու նիհար մարդ, գունատ դէմքով, աչքերը խոր ընկած, մէջքը

տան Վահագն պատկերը իրական է, որ շրջապատում է մեզ, և ոչ թե հնարովի մի բան, որ ստեղծել է ինքը՝ հեղինակը, ինչպես ասում են, «ի հեճուկս ամենայնի»։ Ինչ որ ասում է Վահագնը, ամենը ճշմարտություն է, ամենը կյանքից է վերցրած, ամենը ապրում է մեր շրջապատում։ Ինչ որ նա ասում է, ամենը մենք ենք ասում, ամենը մեր մտքերն են, մեր զգացմունքները, մեր ցավերը, մեր հոգսերը։ Ինչ որ նա ասում է, ամենը մեր ասելիքն է, մեր ուզածը, մեր ցանկացածը։ Ինչ որ նա ասում է, ամենը մեր ասելիքն է, մեր ուզածը, մեր ցանկացածը։ Ինչ որ նա ասում է, ամենը մեր ասելիքն է, մեր ուզածը, մեր ցանկացածը։

II.

Ծանոթացանք Վահագնի հետ, տեսանք նրա տանը, նրա ընտանիքում, նրա շրջապատում։ Հիմա ուզում եմ ծանոթանալ նրա հետ նրա գործունեության ասպարեզում։ Ուզում եմ տեսնել, թե ինչպես է նա վարվում իր գործերի մեջ, ինչպես է նա կատարում իր պարտականությունները, ինչպես է նա ապրում իր կյանքը։

Գնանք Վահագնի հետ նրա գործարանը։

— Ես ուզում եմ տեսնել, թե

Ա ՄԵՆ ԱՐԺԱՆԻ ՊՈՉԸՆԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Ղուկաս Տեր-Պետրոսեան

(«Դար-Փաթի» ի թղթակցի)

Ղուկաս Տեր-Պետրոսեան ծնած է 1870 թուին Ալաշկերտի գաւառի Մեծ Մանթաշ գիւղը։ Ուսումը ստացած է գիւղի դպրոցին մէջ։ Տասնհինգ տարեկան հասակին ան մեկնած է Պարսկաստան, ուր ապրած է 15 տարի։ Ան եղած է Ուրմիոյ, Սալմաստի, Խոյի, Մարաղայի, Թաւրիզի, Սոլդուզի, Սաւճպուլաղի, Ղազուինի, Զանջանի, Սուլթանիէի, Քասուինի, Համատանի, Քրմանշահի, Սանանտաճի, Քէրմանի, Եզտի, Իսպահանի, Շիրազի, Պուշիրի, Պարսից ծոցի, Պանտարապասի, Պանտարապասի, Պանտարապաս

նելը հասկանում է ամեն մի գիտակ մարդ»։

ՀԵՐՆՈԴՈՐԻԱ

«Figaro»-ի թղթակիցը ցեմինէում մի զրուցաարութիւն է ունեցել Հերնոգորթիայի իշխան Նիկոլայի հետ։ Թղթակիցը հարցրել է, թէ ճիշտ է, որ Հերնոգորթիան, Սերբիան և Բուլղարիան մտադիր են գաշնակցութիւն կազմել և թէ այդ նպատակով մի անսակցութիւն է տեղի ունեցել Նիշում Բուլղարիայի իշխան Ֆերդինանդի, Հերնոգորիայի գահաժառանգ Դանիլայի և Սերբիայի թագաւոր Ալէքսանդրի միջև։ «Այդ ճիշտ չէ,—պատասխանել է իշխանը,—նախ՝ իմ որդին Վիեննայից վերադառնալիս ամենևին կանգ չի առել Նիշում, և երկրորդ՝ ես ամենևին չեմ տեսնում այդպիսի դաշնակցութեան անհրաժեշտութիւնը։ Սերբիան, Բուլղարիան և Հերնոգորիան երբէք չեն փոխել իրենց վարմունքն իրենց ազգայնութեան զարգացման գործում, և մենք երբեմն էլ ցանկանում ենք մի բան—status quo ի պահպանումը Բալկանեան Թերակղզում։ Ես սիրում եմ Բուլղարիայի իշխանին, ես լիուլի մօտիկ եմ նրան և կարծում եմ, որ այս տեսակէտից նա էլ նոյն հայեացքն ունի, ինչ որ ես։ Ինչ վերաբերում է Ալէքսանդր Թագաւորին, եթէ Սերբիայի և Հերնոգորիայի միջև որևէ սառնութիւն է եղել, դրա պատճառը միմիայն Թագաւոր Միլանն էր։ Միլանը դադարել էր սլաւեան լինելուց, և իր այդ վարմունքի ու քաղաքականութեան մէջ ցոյց տուած յամառութիւնը շատ նպաստեց այն բանին, որ մենք իրար վրայ նայում էինք Թշնամու պէս։ Այժմ, ես յոյս ունիմ, Ալէքսանդր Թագաւորը կարող է պաշտպանել այն քաղաքականութիւնը, որին նա սկսել է հետևել, և չի դատապարտել այդ քաղաքականութեանը։ Մեր երկու երկրների միջև յարաբերութիւնները աւելի լաւացել են, քան մի տարի առաջ։ Հրաւիրելն աւելի ևս կը լաւանայ. այդ կըտեսնէք։ Ապագան կապացուցանէ այդ»։

Թղթակիցը հետաքրքրուել է նաև այն բանով, թէ իշխան Նիկոլայը մտադիր չէ՞ արդեօք ազդեցութիւն գործել իր փեսայի—Իտալիայի Էմմանուէլ Թագաւորի վրայ, նրան եւրոպական դաշնակցութիւնից անջատելու և ռուս-ֆրանսիական քաղաքականութեանը յարելու համար։ Իշխանը պատասխանել է, թէ Վիկտոր Էմմանուէլ Թագաւորի վրայ իւր ունեցած ազդեցութեան վերաբերեալ լուրերը բոլորովին հնարովի են և թէ իր խօսակցութիւնները փեսայի հետ միշտ վերաբերում են ընտանեկան գործերին։

ՀԻՆԱՍՏԱՆ

Հինաստան ուղարկուած անգլիական թղթակիցներից մէկը, Ջորջ Լինչ, ներկայումս հասել է Նեու-Եօրկ։«Hew-York-Herald» ի ներկայացուցչին նա յայտնել է իւր դիտողութիւնները։ Լինչը խորհուրդ համարուած է, որ Հինաստանը զոհուից օտարերկրացիների ապահովութեանը։ Միսիօնարների վարմունքը նա անուանում է վրիժառուների վարմունք։ «Հինուորներին,—ասում է նա,—արգելուած էր կողոպտելը, իսկ միսիօնարներին ոչ, և, օրինակ, նրանցից մէկը—Ծիւկսբէրի—այնքան կողոպտել էր, որ կողոպտուած իրերից վաճառումը տեց մի քանի օր։ Լինչը դեսպանատների ազատումից մի քանի օր յետոյ հանդիպում է ոմն Էնենտի, որը պատկանում էր ամերիկեան մի միսսիայի։ Այդ միսիօնարն առանց քաշուելու ասում է Լինչին, թէ գնում է կողոպտելու մի հարուստ չինացու տուն, որը նրա անձնական թշնամին է եղել և յաճախ խանգարում է եղել իւր միսիօնարական գործը։ Երկու օր յետոյ այդ միսիօնարը մի մեծ վաճառանոց է սարքում իւր կողոպտած իրերի։ Իւր անձնական թշնամու տան իրերէնները վաճառելուց յետոյ Քրիստոսի անունով գործող ամերիկացի առաքեալը կողոպտում է չինական ուրիշ տներ ևս։

ՀԵՌԱԳՐՆԵՐ

ՊԵԿԻՆ, 14 փետրուարի.—Պեկինից հաղորդում են, որ Վալդերզէէն հրամայել է դադարեցնել պատժական արշաւանքները։

ԿԱՆԷՄ.—Հիւպատոսները արքայազն Գէորգին հաղորդեցին, թէ պետութիւնների ներկայացուցիչները Հաւոմում որոշել են մերժել արքայազնի առաջարկը կղզին Յունաստանի հետ միացնելու և միջազգային զօրքերը յունական զօրքերով փոխարինելու մասին։

ԲԵՐԼԻՆ.—Բերկոյի լրագրները հաղորդում են, որ դաշնակցական խորհրդին առաջարկուած է չինական արշաւանքի համար լրացուցիչ 120.682,000 մարկ յատկացնել։ Բացատրութեան մէջ արշաւանքի մասին ասուած է հետևեալը. «Պետութիւնների նախկին միջամտութիւնները բարելաւում էին դրութիւնը Հինաստանում դանդաղ, բայց նկատելի կերպով. իսկ գերմանական պլենիպոտենտ հրամանատար նշանակուելուց յետոյ սկսուեց պատերազմական գործողութիւնների մուրթիւն և չուտով երեան եկան բարերարող հետևանքները։ Գրաւուած հողի սահմաններից դուրս խոշոր արշաւանքներ այլ ևս չարկաւոր չեն, միայն փոքրիկ արշաւանքներ կըլինեն, երկիրը խաղաղեցնելու համար։ Խռովութիւնների գոհացուցիչ վախճանն ապահովուած է, միայն ժամանակը յայտնի չէ։ Վարձատրութեան վերաբերեալ բանակցութիւնների ժամանակ ճնշում գործելու համար անհրաժեշտ է Հինաստանում թողնել գերմանական բոլոր ոյժերը»։ Ծախքերը հաշուած են մինչև մարտի 18 ը, բայց եթէ գործը վաղ վերջանայ, խնայողութիւն կանուխ։ Բացի դրանից, պահանջուած է 100,000 մարկ Պեկինի գերմանական դեսպանատունն ընդարձակելու և պահպանելու համար։

ԼՈՆԴՈՆ.—«Daily Chronicle»-ն, առանց երաշխաւոր լինելու սաուգութեանը, հաղորդում է, թէ Կիաչենների և Բաթայի մէջև տեսակցութիւն է եղել անգլիացիներին անձնատուր լինելու պայմանները որոշելու համար։ Բոքսային 24 ժամ ժամանակ էր տրուած, որպէսզի նա հնարաւորութիւն ունենայ համաձայնութեան գալու իւր սպանների հետ բրիտանական պայմաններն ընդունելու համար։ Մինիստրութեան երեկուայ խորհրդի մէջ, իբրեէ, քննւում է եղել այդ խընդիրը։

«Times»-ը հաղորդում է, որ Դևետի հետ եղած ոյժերը հաշւում են 500—800 հոգի. բացի դրանից նրան հետևում են իւր բոլոր ոյժերի մնացորդներն ու հերոցգի զօրախումբը Գալվինիայից։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 փետրուարի.—Հոբրեքչաբթի, փետրուարի 14-ին, օրուայ ժամը երկուն, լուսաւորութեան մինիստրի ընդունարանում, մինիստրութեան շէնքի մէջ, այն ժամանակ, երբ գաղտնի խորհրդական Բագալեպովը հարցուփորձ էր անում խնդրառուներին, վերջիններից մէկը, Դոմելի բնակիչ Պետր Կարպովիչ, ատրճանակ պարպելով վիրաւորեց մինիստրի վիզը։

ԼՈՆԴՈՆ.—Պիտչեները հեռագրում է Մէդլբուրգից, որ Ֆրենչը մինչև փետրուարի 12 ը հետևեալ նոր ատրն է ուղել. Կրուպպի 19 փունտանոց մի թընդանօթ, մի հաուբից, Մաքսիմի մի թընդանօթ, 2,000 պատրոնտաշ ռազմամթերքով լի, 153 հրացան, 388 ձի, 52 ջորի, 834 գոմէշ, 5,600 պլուխ տաւար, 9800 ոչխար և 287 սայլ։ Բոէրներից սպանուել է դարձեալ 4, վիրաւորուել է 5, գերի է ընկել 300 հոգի. բրիտանացիները ոչ մի կորուստ չեն ունեցել։

ՏՐԻՊՈԼԻՍ.—Վադայի սուլթանի դէմ ապստամբութիւն է ծագել նրա ձեռնարկած բազմաթիւ մահուան պատիժների պատճառով։ Մեռած սուլթան Ալիի որդուն՝ Ահմէդին ապստամբները սուլթան են հրապարակել։ Լսւում է, որ ֆրանսիացիները գտնւում են կիսաճանապարհին Թաուտի և Վադայի միջև։

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՒԻՐ

Հոգևոր իշխանութեան հրամանով Կուկիոյ Թանգոյեան ս. Աստուածածին եկեղեցու համար նոր եբէցփոխանի ընտրութիւն է նշանակուած փետրուարի 18-ին, (երկրորդ անգամ) կիրակի ս. պատարագից յետոյ 12 ժամին։ Ուստի խնդրեմ յիշեալ օրը որոշեալ ժամին չնորհ բերէք մասնակցելու ընտրութեանը։

Դործ. բ. մասի՝ Գրիգոր ա. ք. Մանդակունի
(547) 1—1

ՀՈՑՍ ՏԵՍԱՒ

„ԼՈՒՄԱՅ“
ՀԱՆԴԻՍԻ

1901 թ. (VI տ.) առաջին գիրքը և ուղարկուեց բաժանորդներին։

Բովանդակութիւնը հետևեալն է.

Ռ. Կ. Կրհալուի Ձիւնը.—Թարգ. Ցար. Թումանեանց։

Մարիամ (Հէքիաթ) —Դամառ-Քաթիպա։

Չորրորդ դարու Հայ եկեղեցին։

Վարդի իւղը մահադեղ.—Պերճ Պաշչեանց։

Սև մտածումներ } (Բանաստ.). —
Ոն, թող որոտայ } Հրանդ Վահէ։

Նոր-Նախիջևանի Ս. Խաչ Վանքը.—Երուանդ Շահազիզ։

Իմ օրագիրը.—Իս. Ցարութիւնեան։

Հայոց կրօնական բանաստեղծութիւնը—Դ. Խաչկոնց։

Ալագեազ.—Ց. Յովհաննիսեան։

Քահանայական խնդիր.—Սև մարդը։

Մի էջ Ներսիսեան դպրոցի պատմութիւնից.—Դիւտ Ա. քահ Ազանեանց։

Տօրկուատօ Տասսօ. Դէօթէի.—Թարգմ. բժ. Լ. Տիգրանեանց։

Նամակ խմբագրութեան —Գ. Ս.։

Սէր և Ատանայի իշխանաժողովը —Ա. Տէր-Միքէլեան։

Ս. Նազարեանի նամակները։

Գրական երևոյթները.—Ն. Քարամեան։

«Մայրենի խօսք».—Ա. Բ.։

Թիֆլիսի Հայ եկեղեցական թանգարանի վարչութիւն։

Մ. Մամուրեան։

Մամուլի տուները —Ա. Տէր-Միքէլեան։

Ստացուած գրքեր։

Խմբագրութեան յանուցումներ։

Կոյր երաժիշտը (Կարաչենկօի).—Թարգմ. Մուշէ վարդապետ։

Կանոնք ժողովոց. Ազիստակէս արքեպ. Դաւթեան։

Հրատարակիչ՝
Գիւտ ա. քահ. Աղանեանց
(548) 1—1

ԹԻՖԼԻՍԻ ՈՒՌԻՏՐԱԿԱՆ ՆԱԽԹԱՐԴԻՒ ՆԱԽԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

բաժնետէրերն այսու հրաւիրւում են

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ,

որը տեղի է ունենալու կիրակի, փետրուարի 18-ին, Թիֆլիսի ժողովարանի դահլիճում, ճիշտ առաւօտեան ժ. 11-ին. պ. պ. բաժնետէրերը պարտաւոր են դահլիճ մտնելիս ներկայացնել իսկական անդորրագրերը։
(550) 2—2

(М.) № 90582 52—33

ՀԱՐԿԱ ԽՈՐ Է

ԷՔՍՊԵԴԻՏՈՐ

Պայմաններին ծանօթանալու համար դիմել «Նոր-Դար»-ի վարչութեան։

ՊԱՐԵՐԻ
ՈՒՍՈՒՑԻՉ ԵՒ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ

Լ. Գ. և Ն. Ս. ՕՎԵՐԼՈՆԵՐԸ

Սովորեցնում են բոլոր արդէն յայտնի և նորագոյն պարերը։ Գոլովինսկի պրոսպեկտի անկիւնը, տուն Բարանասեանի № 45 (ցիրկի դիմացը). Երեքշաբթի և ուրբաթ օրերը երեկոյեան ժամի 5 6-ը յատկապէս երեխաների դասեր
(496) 25—11

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

ՀԱՄԱՌՕՏ ՁԵՌՆԱՐԿ

ԹՂԿԱՀԱՏՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԹՂԿԻ ՊԱՏՈՒՀԱՍՏՄԱՆ

Աշխատասիրեց
Ա. ՍԱՐԿ. ԱԼԻՍԱՋԵԱՆՑ
ԳԻՆՆ Է ԿՈՊ.

Վաճառւում է Թիֆլիսի Կովկասեան և Կեդրոնական գրավաճառանոցներում։
547) 4—3

ԱՄԵՆԱԼԱՒ ԴԵՂԵՐԸ՝ ԱՏԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՏԻՄՈԼԵԱՆ ԱՏԱՄԻ ԷԼԻՔՍԻՐ,
ՏԻՄՈԼԵԱՆ ԱՏԱՄԻ ՓՈՇԻ,

ԲԱՑԱ ՄԻԱՅՆ
ՊԱՏՐԱՍՏԻՐ ԴԻ

ՑԵԽՆՈ-քիմիական լաբորատորիայի

Զգուշանալ կեղծումներից։

Գլխաւոր պահեստը

Ս.-Петербургъ, Коломенская, д.№12.
Վաճառւում են ամեն տեղ

(М.) №52530 9—6

ԱՏԱՄՆԵՐԻ ՀԱՐՑ

ՃԱՐՏԱՐ ԵԱԿՈՎԼԵՒՆԱ

ԲՐՈՆ-ՖՈՆ-ԲՐԵՆՆԵՐ

Ընդունում է առաւօտեան ժ. 9—2
երեկոյեան ժ. 4—7

ԹԻՖԼԻՍ, Մէյէյլովսկայա, № 71.
471) 50—13

„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ“

Քիրմայի տակ նոր կազմակերպուած ընկերութիւնը, իրագործելով իւր նպատակը քաց է անում

ՏՊԱՐԱՆ, ԴԱՐՁՈՒԼԱՐԱՆԻ, ՏԱՒԱՐՁՈՒԼԱՐԱՆԻ ԵՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱՐԱՆԻ

բաժանմունքներով.

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆ Է 50000 Ր.,

բաժանուած 1000 փայի, իւրաքանչիւր փայը 50 ր.։ Ցանկացողները երկու սեռից հրաւիրւում են նախօրօք գրուել փայի ցոյն փետր. 17-ից սկսած մինչև 25 ը, Ի. Ս. Տէր-Սարգսեանի թղթի մագազինում (Դվորցովայա փ.) և Բորակչեի և ընկ. կոմիսիոնական գրասենեակում (549) (Սիօնի փողոց, Արծրունու քարվանսարայ, № 12)։ 5—1

„ԼՈՒՅՍ“

ՆԱԽԹԱՐԴԻՒՆԵՐԸՆԴՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ „ԼՈՒՅՍԻՆԸ

յայտնում է ի գիտութիւն պ. պ. փայատէրերի, որ սոյն փետրուարի 21-ից մինչև 28-ը նշանակուած է երկրորդ 10% մուտքը, այսինքն 10 ական րուբլի իւրաքանչիւրը փայի համար։ Պէտք է ներկայացնել հին փայերը նորերի փոխարինելու համար։

Ձիշդ ցնում է նաև ընկերութեան պայմանագրութեան §7 յօդուածը։

Ընկերութեան գրասենեակը գտնւում է Երևանեան հրապարակի վերջայ, Խարազեանի տանը։

(546) 3—2

Ա. ՓՐԻՕՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ.
ԲԱՆԿԱՅԻՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

Ներքին փոխառութեան վիճակախաղի տոմսերն ապահովացնելու համար վերջնում է ցնոր տնօրինութիւն՝

1ր.75կ. ամեն մէկ տոմսը II կարգի 1901 թ. մարտի մէկին տիրաժից
1ր.10կ. » » » III » 1901 թ. մայիսի մէկին տիրաժից

Բացի 15 կոպ. մարկան ամեն մէկ անդորրագրից։

Դրասենեակը հետազրով և վերադիր վճարով ապահովացումն չէ ընդունում։
(548) 3—2

ՆԵՐԱՐԿՈՒՄՆ ՄԱՏԻԿՈՅԻ
(INJECTION AU MATICO)

Դրիմո և ընկ. դեղագործների թոյլ է տրուած Ռուսիայում։ Այս հեղուկի մէջ չհանգործուած են պերուանեան Մատիկո բոյսի յատկութիւնները, մի բոյս, որ զարմանալի կերպով բժշկում է հոնորէէից (սերմնաթափութիւն) և մի քանի տարուայ ընթացքում համաշխարհային հռչակ է ստացել։ Կարճ ժամանակում բուժում է ամենազօրեղ սերմաթափութիւնները։

Պարիզ, 8 Rue Vivienne և գլխաւոր դեղատներում։

(М.)№200,245 24—4

Дозв. цензурою Тифлисъ, Февраля 16-го дня 1901 г. Տպարան Ս. Ի. Գետրովի Типографія А. И. Петрова, Гохов. пр., № 12 Телефонъ 387